ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի կողմից թիվ ԵԴ/29555/02/20 քաղաքացիական գործով 2024 թվականի հոկտեմբերի 28-ին կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ

28.10.2024 թվական

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 2024 թվականի հոկտեմբերի 28-ին գրավոր ընթացակարգով քննելով Լիլիթ Հովհաննիսյանի, Նարե ու Նանե Դավթյանների վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.08.2023 թվականի որոշման դեմ՝ ըստ Լիլիթ Հովհաննիսյանի, Նարե և Նանե Դավթյանների հայցի ընդդեմ Արման Նուռի ու երրորդ անձ «Երևան» նոտարական տարածքի նոտար Նաիրա Մանուչարյանի՝ նվիրատվության պայմանագրերը մասնակիորեն անվավեր ճանաչելու և բնակտարածության օգտագործման իրավունքը ճանաչելու պահանջների մասին, որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.08.2023 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի դատավոր Էդ. Սեդրակյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում եմ իմ հատուկ կարծիքն այդ մասերի վերաբերյալ:

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Լիլիթ Հովհաննիսյանը, Նարե և Նանե Դավթյանները պահանջել են մասնակիորեն անվավեր ճանաչել Լիլիթ Հովհաննիսյանի ու Արման Նուռի միջև 05.04.2019 թվականին կնքված թիվ 2268, թիվ 2269 և թիվ 2270 անշարժ գույքի բաժինների որոշման ու բաժնի նվիրատվության պայմանագրերը և Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Փափազյան փողոցի թիվ 16բ շենքի 60-րդ հասցեում գտնվող բնակարանի նկատմամբ ճանաչել իրենց բնակտարածության օգտագործման իրավունքը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 08.02.2023 թվականի «Քաղաքացիական գործից մաս առանձնացնելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմամբ թիվ ԵԴ/29555/02/20 քաղաքացիական գործից առանձնացվել է նվիրատվության պայմանագրերը մասնակիորեն անվավեր ճանաչելու պահանջի մասը, իսկ բնակտարածության օգտագործման իրավունքը ճանաչելու պահանջների մասով առանձնացված գործը հանձնվել է գրասենյակ՝ վերամակագրության նպատակով:

Դատարանի 08.02.2023 թվականի «Հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմամբ նվիրատվության պայմանագրերը մասնակիորեն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 22.08.2023 թվականի որոշմամբ Դատարանի 08.02.2023 թվականի «Հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշման դեմ Լիլիթ Հովհաննիսյանի, Նարե և Նանե Դավթյանների բերած վերաքննիչ բողոքը մերժվել է, ու Դատարանի 08.02.2023 թվականի որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Լիլիթ Հովհաննիսյանը, Նարե և Նանե Դավթյանները (ներկայացուցիչ Հերմինե Ավետիսյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը</u>.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ, 331-րդ, 332-րդ, 335-րդ և 337-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 57-60-րդ, 62-րդ, 66-րդ ու 168-րդ հոդվածները:

Բողոք բերած անձինք նշված հիմքի առկայությունը պատճառաբանել են հետևյալ հիմնավորումներով.

Ստորադաս դատարանները չեն պարզել, թե երբ է իրենցից Լիլիթ Հովհաննիսյանն իմացել իր իրավունքների խախտման մասին: Փոխարենը, արձանագրելով, որ իր իրավունքների ենթադրյալ խախտման մասին պետք է կամ պարտավոր էր իմանալ առնվազն անշարժ գույքում սեփականության իրավունքով իրեն պատկանող բաժնեմասերը պատասխանողին անհատույց հանձնելու վերաբերյալ նվիրատվության պայմանագրեր կնքելիս, այն է՝ 05.04.2019 թվականին, հայցային վաղեմության մեկամյա ժամկետի ընթացքը հաշվարկել են հենց այդ օրվանից՝ անտեսելով, որ գործարքները կնքելու պահին ինքը չէր կարող իմանալ խաբեության մասին, իսկ եթե իմանար, ապա այդ գործարքները չէր կնքի: Ավելին՝ նվիրատվության պայմանագրերի կնքմանը հաջորդած մեկ տարվա ընթացքում Արման Նուռի վարքագիծը որևէ կերպ չէր վկայում ձեռք բերված պայմանավորվածության խախտման մասին:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ իրենցից Լիլիթ Հովհաննիսյանն իր խախտված իրավունքների մասին իմացել է միայն 08.08.2020 թվականին՝ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Արաբկիրի անձնագրային բաժանմունքի պետ Ն. Բարսեղյանի 28.07.2020 թվականի թիվ 22/2-2154 գրությունից, ինչպես նաև Արման Նուռի կողմից 2020 թվականի օգոստոսին ուղարկված բջջային կարճ հաղորդագրություններից, ուստի հայցային վաղեմության ժամկետի հաշվարկը պետք է սկսել 08.08.2020 թվականից:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության չի ենթարկել գործում առկա ապացույցները, որոնք հաստատում են, որ իրենցից Լիլիթ Հովհաննիսյանն անշարժ գույքի նվիրատվությունը կատարել է դրանք

հետագայում իրենց երեխաների անունով անվանափոխելու, իր ու երեխաների՝ Երևանի Փափազյան թիվ 16բ շենքի 60-րդ հասցեի բնակարանից օգտվելն անխոչընդոտ շարունակելու պայմանով և նպատակով: Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն փաստը, որ նվիրառու Արման Նուռի խաբեությունը բացահայտվել է գործարքները կնքելուց մեկ տարի անց, երբ վերջինս դիմում է ներկայացրել Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Արաբկիրի անձնագրային բաժանմունք՝ իրենցից Լիլիթ Հովհաննիսյանին հաշվառումից հանելու վերաբերյալ ու երեխաներին ուղարկված կարճ հաղորդագրություններով պահանջել է ազատել բնակարանը:

Վերաքննիչ դատարանը ձևական է գնահատել այն, որ Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածը և, հայցային վաղեմության կիրառմամբ հայցը մերժելով, կայացրել է ոչ թե վճիռ, այլ որոշում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 22.08.2023 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

<u>3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.</u>

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Արաբկիր ՔԿԱԳ տարածքային բաժնի պետի կողմից 15.09.2016 թվականին տրված թիվ 188746 ամուսնության վկայականի համաձայն՝ Լիլիթ Հովհաննիսյանի և Արման Նուռի ամուսնությունը գրանցվել է 20.12.1999 թվականին **(հատոր 1-ին, գ.թ. 61).**

2) Արաբկիր ՔԿԱԳ տարածքային բաժնի պետ Կարինե Շահբազյանի կողմից 22.02.2019 թվականին տրված թիվ ԲԱ087706 ամուսնալուծության մասին պետական վկայականի համաձայն՝ 22.02.2019 թվականին Լիլիթ Հովհաննիսյանի և Արման Նուռի ամուսնությունը լուծվել է **(հատոր 1-ին, գ.թ. 55).**

3) Արդարադատության նախարարության «Երևան» նոտարական տարածքի նոտար Նաիրա Մանուչարյանի կողմից 05.04.2019 թվականին վավերացրած անշարժ գույքի բաժինների որոշման և բաժնի նվիրատվության պայմանագրի համաձայն՝ Լիլիթ Հովհաննիսյանն Արման Նուռի սեփականությանն է անհատույց հանձնել, իսկ վերջինս ընդունել է իրենց համատեղ սեփականության իրավունքով պատկանող Երևան, Կենտրոն վարչական շրջան, Աբովյան փողոց, 41-րդ շենք թիվ 25 հասցեում գտնվող անշարժ գույքի իրեն պատկանող 1/2 բաժինն ամբողջությամբ: Անշարժ գույքի նկատմամբ գրանցված է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի գրավի իրավունքը **(հատոր 1-ին, գ.թ. 54).**

4) Արդարադատության նախարարության «Երևան» նոտարական տարածքի նոտար Նաիրա Մանուչարյանի կողմից 05.04.2019 թվականին վավերացրած անշարժ գույքի բաժինների որոշման և բաժնի նվիրատվության պայմանագրի համաձայն՝ Լիլիթ Հովհաննիսյանն Արման Նուռի սեփականությանն է անհատույց հանձնել, իսկ վերջինս ընդունել է իրենց համատեղ սեփականության իրավունքով պատկանող Երևան, Արաբկիր վարչական շրջան, Վ.Փափազյան փողոց, թիվ 16բ շենք, 60-րդ բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքի իրեն պատկանող 1/2 բաժինն ամբողջությամբ: Անշարժ գույքի նկատմամբ գրանցված է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի գրավի իրավունքը **(հատոր 1-ին, գ.թ. 56).**

5) Արդարադատության նախարարության «Երևան» նոտարական տարածքի նոտար Նաիրա Մանուչարյանի կողմից 05.04.2019 թվականին վավերացրած անշարժ գույքի բաժինների որոշման և բաժնի նվիրատվության պայմանագրի համաձայն՝ Լիլիթ Հովհաննիսյանն Արման Նուռի սեփականությանն է անհատույց հանձնել, իսկ վերջինս ընդունել է իրենց համատեղ սեփականության իրավունքով պատկանող Երևան, Կենտրոն վարչական շրջան, Աբովյան փողոց, թիվ 41 շենք, 12-րդ բնակարան հասցեում անշարժ գույքի իրեն պատկանող 1/2 բաժինն ամբողջությամբ: Անշարժ գույքի նկատմամբ գրանցված է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի գրավի իրավունքը **(հատոր 1-ին, գ.թ. 57).**

6) Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Արաբկիրի անձնագրային բաժանմունքի պետ Ն. Բարսեղյանի 28.07.2020 թվականի թիվ 22/2-2154 գրության համաձայն՝ Երևանի Փափազյան փողոցի թիվ 16բ շենքի 60-րդ հասցեում գտնվող բնակելի տարածության սեփականատեր Արման Նուռի 13.07.2020 թվականին ներկայացված դիմումի համաձայն, Լիլիթ Հովհաննիսյանը հանվել է վերոնշյալ հասցեի հաշվառումից՝ Կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի թիվ 1231-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 13.1-ին կետի հիմքով **(հատոր 1-ին, գ.թ. 62).**

7) «ՀայՓոստ» ՓԲԸ-ի հաճախորդների աջակցման տնօրեն Սիրանուշ Մանանդյանի կողմից 24.02.2023 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Արաբկիրի անձնագրային բաժանմունքի կողմից ուղարկված գրությունը հայցվոր Լիլիթ Հովհաննիսյանն ստացել է 08.08.2020 թվականին **(հատոր 4-րդ, գ.թ. 19).**

8) Լիլիթ Հովհաննիսյանը, Նարե և Նանե Դավթյանները դատական պաշտպանության են դիմել 10.09.2020 թվականին **(թիվ ԵԴ/26725/02/20 քաղաքացիական գործ, հիմք՝ «www.datalex.am» դատական տեղեկատվական համակարգ)**.

9) գործով վկա Ջուլիետտա Մանդալյանը, ի թիվս այլի, ցուցմունք է տվել այն մասին, որ հայցվոր Լիլիթ Հովհաննիսյանն իր ամուսնու քույրն է, իսկ Արման Նուռի հետ ունեցել է շատ ջերմ հարաբերություններ: Տեղյակ է, որ նրանց մեջ եղել է խոսակցություն այն մասին, որ նվիրատվությունը պետք է լիներ Արմանի անունով, ով էլ հետագայում գույքը պետք է անվանափոխեր երեխաների անունով **(հատոր 3-րդ, գ.թ. 67-75)**:

<u>4. Հատուկ կարծիքի հիմնավորումները՝</u>

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքները կարող են լինել երկկողմ կամ բազմակողմ (պայմանագիր), ինչպես նաև՝ միակողմ:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է երկու կողմի (երկկողմ գործարք) կամ երեք ու ավելի կողմերի (բազմակողմ գործարք) համաձայնեցված կամքի արտահայտությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքն անվավեր է նույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին

ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքն անվավեր է կնքելու պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո, մեկ կողմի ներկայացուցչի մյուս կողմի հետ չարամիտ համաձայնությամբ կնքված գործարքը, ինչպես նաև այն գործարքը, որն անձն ստիպված է եղել կնքելու ծանր հանգամանքների բերումով իր համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններով, որից օգտվել է մյուս կողմը (ստրկացուցիչ գործարք), տուժողի հայցով դատարանը կարող է ճանաչել անվավեր:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

Նույն օրենսգրքի 332-րդ հոդվածի՝ համաձայն հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է, իսկ 333-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պահանջների որոշ տեսակների համար օրենքով կարող են սահմանվել հայցային վաղեմության ընդհանուր ժամկետի համեմատությամբ կրճատ կամ ավելի երկար հատուկ ժամկետներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին օրենքով սահմանված կարգով դիմում է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին օրենքով սահմանված կարգով վճիռ կայացնելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վիճահարույց գործարքի անվավեր ճանաչման և դրա անվավերության հետևանքների կիրառման մասին հայցը կարող է ներկայացվել այն օրվանից հետո մեկ տարվա ընթացքում, երբ հայցվորն իմացել էր կամ պարտավոր էր իմանալ գործարքն անվավեր ճանաչելու հիմք ծառայող հանգամանքների մասին:

Հիշյալ իրավանորմերի մեկնաբանությունից հետևում է, որ իր իրավունքների պաշտպանության համար անձը կարող է դիմել դատարան որպես կանոն երեք տարվա ընթացքում՝ սկսած այն պահից, երբ իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Միաժամանակ, օրենսդրի կողմից ամրագրվել են նաև հայցային

վաղեմության ընդհանուր ժամկետից տարբերվող ժամկետ, որոնց շարքին է դասվում նաև առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման, ինչպես նաև վիճահարույց գործարքի անվավեր ճանաչման և դրա անվավերության հետևանքների կիրառման պահանջի մասին հայցերով հայցային վաղեմության ժամկետները: Վիճահարույց գործարքի անվավերության հետևանքների կիրառման մասին հայցը կարող է ներկայացվել այն օրվանից հետո մեկ տարվա ընթացքում, երբ հայցվորն իմացել էր կամ պարտավոր էր իմանալ գործարքն անվավեր ճանաչելու հիմք ծառայող հանգամանքների մասին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Լիլիթ Հովհաննիսյանի և Արման Նուռի ամուսնությունը գրանցվել է 20.12.1999 թվականին: 22.02.2019 թվականին Լիլիթ Հովհաննիսյանի և Արման Նուռի ամուսնությունը լուծվել է:

«Երևան» նոտարական տարածքի նոտարի կողմից 05.04.2019 թվականին վավերացրած անշարժ գույքի բաժինների որոշման և բաժնի նվիրատվության թվով երեք պայմանագրերի համաձայն՝ Լիլիթ Հովհաննիսյանն Արման Նուռի սեփականությանն է անհատույց հանձնել, իսկ վերջինս ընդունել իրենց համատեղ սեփականության իրավունքով պատկանող Երևան, Կենտրոն, Աբովյան փողոց 41 շենքի 12 և 25 հասցեներում գտնվող անշարժ գույքերի և Երևան, Արաբկիր, Վ.Փափազյան փողոց, 16բ շենք, 60 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքի իրեն պատկանող 1/2 բաժիներնն ամբողջությամբ: Անշարժ գույքերի նկատմամբ գրանցված է «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության գրավի իրավունքը: ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Արաբկիրի անձնագրային բաժանմունքի պետի 28.07.2020 թվականի թիվ 22/2-2154 գրության համաձայն՝ ըստ ք. Երևան, Փափազյան 16բ շենքի 60 հասցեում գտնվող բնակելի տարածության սեփականատեր Արման Նուռի 13.07.2020 թվականին ներկայացված դիմումի, Լիլիթ Հովհաննիսյանը հանվել է վերոնշյալ հասցեի հաշվառումից՝ ՀՀ կառավարության 2005թ. հուլիսի 14-ի 1231-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 13.1-րդ կետի հիմքով:

Դիմելով դատարան՝ Լիլիթ Հովհաննիսյանը, Նարե և Նանե Դավթյանները խնդրել են մասնակի անվավեր ճանաչել 05.04.2019 թվականի թիվ 2268, 2269 և 2270 անշարժ գույքի բաժինների որոշման և բաժնի նվիրատվության պայմանագրերը և ք.Երևան, Արաբկիր, Փափազյան փողոցի 16բ շենքի 60 հասցեի բնակարանի նկատմամբ ճանաչել իրենց բնակտարածության օգտագործման իրավունքը:

Տվյալ դեպքում Լիլիթ Հովհաննիսյանի կողմից չի հիմնավորվել այն, որ իր կամքը խեղաթյուրվել է Արման Նուռի կողմից դրսևորած խաբեության արդյունքում կամ վերջինիս իմացությամբ, այնինչ, Լիլիթ Հովհաննիսյանը պետք է ապացուցեր, որ գործարքի կողմ հանդիսացող Արման Նուռն ուղղակիորեն կամ անուղղակիորեն (այդ թվում՝ այլ անձանց միջոցով) խաբեության միջոցով հանգեցրել է իր կողմից գործարքը կնքելուն:

Ինչ վերաբերում է հայցվորի վկայակոչած ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Արաբկիրի անձնագրային բաժանմունքի պետի 28.07.2020 թվականի թիվ 22/2-2154 գրությանը, ապա այդ փաստաթղթով ևս չի հիմնավորվել 04.05.2019 թվականին կնքված անշարժ գույքի բաժինների որոշման և բաժնի թիվ 2268, թիվ 2269, թիվ 2270 նվիրատվության պայմանագրերի անվավերությունը խաբեության հիմքով: Ավելին, վկա Ջուլիետա Մանդալյանի ցուցմունքի հաշվառմամբ հաստատված է համարվում, որ մինչ

գործարքների կնքումը հայցվորի և պատասխանողի միջև տեղի են ունեցել բանակցություններ, խոսակցություններ, այդ թվում՝ իր և հայցվորի միջև, և վկան ևս խորհուրդ է տվել ստորագրելու պայմանագրերը: Այսինքն, Լիլիթ Հովհաննիսյանը քաջատեղյալ է եղել, թե ինչ պայմանագրեր է ստորագրվում և ինչ նպատակով: Նշվածի հաշվառմամբ հաստատվում է, որ հայցադիմումը դատարան ներկայացնելու պահի դրությամբ լրացած է եղել հայցային վաղեմության ժամկետները, նկատի ունենալով, որ խնդրո առարկա նվիրատվության պայմանագրերը Լիլիթ Հովհաննիսյանի և Արման Նուռի միջև կնքվել են 04.05.2019 թվականին, իսկ հայցադիմումը դատարան է ներկայացվել 10.09.2020 թվականին, ինչը հիմք է հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով նվիրատվության պայմանագրերը մասնակի անվավեր ճանաչելու հայցապահանջները մերժելու համար:

Նշվածի համատեքստում հիմնավոր է ստորադաս դատարանների այն հետևությունը, որ սույն գործով հայցվոր Լիլիթ Հովհաննիսյանի կողմից բաց է թողնվել իրավունքի պաշտպանության՝ օրենքով սահմանված մեկամյա ժամկետը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով խաբեության ազդեցության ներքո կնքված գործարքներին, արձանագրել է, որ խաբեությունը գործարքի կողմերից մեկի գիտակցաբար դրսևորած անբարեխիղճ վարքագիծն է՝ ուղղված նրան, որ գործարքի մյուս կողմն իր համար ձեռնտու պայմաններով կնքի գործարքը: Գործարքի կնքման մեջ շահագրգռված, անբարեխիղճ կողմն իր մեղավոր գործողություններով մյուս՝ տուժող կողմի մոտ ստեղծում է իրականությանը չհամապատասխանող տպավորություն գործարքի էության, առարկայի, պայմանների վերաբերյալ՝ ազդելով նման գործարք կնքելու նրա որոշման վրա: Ընդ որում, եթե տուժող կողմի կամքը խաթարվել է գործարքի կողմ (ներկայացուցիչ) չհանդիսացող այլ անձանց կողմից՝ առանց գործարքի կողմի որևէ կերպ մասնակցության, ապա գործարքը չի կարող վիճարկվել խաբեության հիմքով, քանի որ գործարքը խաբեության ազդեցության տակ կնքված որակելու համար անհրաժեշտ պայման է այն, որ գործարք կնքելիս տուժող կողմի կամքը խաթարված լինի գործարքի մյուս կողմի (ներկայացուցչի) մեղավոր վարքագծի՝ այդ թվում և այլ անձանց միջոցով դրսևորված գործողությունների հետևանքով: Այսպիսով, գործարքը խաբեության ազդեցության տակ կնքված լինելու հիմքով անվավեր ճանաչվելու համար տուժող կողմը պետք է որոշակի ապացույցներ ներկայացնի իր կամքը խաթարվելու հարցում գործարքի մյուս կողմի (ներկայացուցչի) կողմից անձամբ կամ այլ անձանց միջոցով մեղավոր վարքագծով (գործողությամբ կամ անգործությամբ) մասնակցության մասին *(տե՛ս Ստեփան Գրիգորյանն ու Անահիտ Գրիգորյանն ընդդեմ Արսեն Բաղրամյանի, Սուսաննա Խաչյանի և Արթուր Ավալյանի, երրորդ անձինք «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի, Ռոբերտ Մարտիրոսյանի թիվ ԵԿԴ/5820/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.02.2022 թվականի որոշումը):*

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ յուրաքանչյուր գործարք (պայմանագիր) նախևառաջ կամային ակտ է, որն ուղղված է որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն: Գործարքի կնքման համար առաջնային նշանակություն ունեն «կամք» և «կամահայտնություն» հասկացությունները: Հետևաբար ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել բացահայտել նշված հասկացությունների բովանդակությունը: «Կամքը» անձի

ներքին ցանկությունն է, պահանջը, ձգտումը, մտադրությունը, դիտավորությունը, համաձայնությունը: «Կամահայտնությունը» կամքի արտահայտման արտաքին ձևն է, միջոցը, եղանակը: Այլ կերպ ասած՝ գործարքն այն կնքած անձանց ներքին կամքի և արտաքին կամահայտնության համակցությունն է: Ընդ որում, օրենքով նախատեսված դեպքերում կնքված գործարքում կամքի և կամահայտնության անհամապատասխանությունը կարող է հանգեցնել այդ գործարքի անվավերությանը: Այդպիսի անհամապատասխանությունը կարող է պայմանավորված լինել ինչպես գործարքը կնքած անձանց անձնական հատկանիշներով, այնպես էլ արտաքին ներգործության ազդեցությամբ *(տե՛ս Նելլի Հակոբյանը, Ուսրան և Արթուր Գևորգյաններն ընդդեմ «Համխաչ» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/1013/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը):*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք կամ իրեն, կամ երրորդ անձին ուղղված գույքային իրավունք (պահանջ), կամ ազատում է, կամ պարտավորվում է նրան ազատել իր կամ երրորդ անձի հանդեպ ունեցած գույքային պարտավորությունից:

Տվյալ դեպքում թիվ 2268, 2269 և 2270 անշարժ գույքի բաժինների որոշման և բաժնի նվիրատվության պայմանագրերը Լիլիթ Հովհաննիսյանի և Արման Նուռի միջև կնքվել են 05.04.2019 թվականին, նույն թվականին ենթարկվել նոտարական վավերացման «Երևան» նոտարական տարածքի նոտար Նաիրա Մանուչարյանի կողմից: Նշված պայմանագրերի համաձայն՝ Լիլիթ Հովհաննիսյանն Արման Նուռի սեփականությանն է անհատույց հանձնել, իսկ վերջինս ընդունել իրենց համատեղ սեփականության իրավունքով պատկանող Երևան, Կենտրոն, Աբովյան փողոց 41 շենքի 12 և 25 հասցեներում գտնվող անշարժ գույքերի և Երևան, Արաբկիր, Վ.Փափազյան փողոց, 16բ շենք, 60 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքի հայցվորին պատկանող 1/2 բաժիններն ամբողջությամբ: Նկատի ունենալով, որ հայցային վաղեմության ժամկետի հոսքը սկսվում է այն պահից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր ենթադրյալ իրավունքների խախտման մասին, ապա ինչպես վերը նշվեց, Լիլիթ Հովհաննիսյանի կողմից նվիրատվության պայմանագրերը կնքվել են 05.04.2019 թվականին, հետևաբար վերջինս իր իրավունքների ենթադրյալ խախտման մասին պետք է կամ պարտավոր էր իմանալ առնվազն 05.04.2019 թվականին անշարժ գույքերում սեփականության իրավունքով իրեն պատկանող բաժնեմասերը պատասխանողին անհատույց հանձնելու վերաբերյալ նվիրատվության պայմանագրեր կնքելիս, որպիսի պայմաններում Լիլիթ Հովհաննիսյանը դատական պաշտպանության է դիմել հայցային վաղեմության 1 տարվա ժամկետի ավարտից հետո՝ բաց թողնելով օրենքով սահմանված և տվյալ դեպքում կիրառելի հայցային վաղեմության մեկ տարվա ժամկետը:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ Լիլիթ Հովհաննիսյանն իր խախտված իրավունքների մասին իմացել է միայն 08.08.2020 թվականին՝ ՀՀ ոստիկանության գրությունից, նաև պատասխանողի սպառնալիքներով, ուստի պայմանագրի անվավերության վաղեմության ժամկետը սկսել է հոսել 08.08.2020 թվականից, ապա պետք է արձանագրել,

որ անձի հաշվառումը կամ նրան հաշվառումից հանելը սեփականության իրավունքից հրաժարվելու գործընթացի բաղկացուցիչ մաս չէ, որպեսզի հայցվորը դրանով պայմանավորեր գույք նվիրելիս իր կամքի վրա գործադրված ազդեցությունը որպես խաբեություն, ուստի անհիմն է այն փաստարկը, թե Լիլիթ Հովհաննիսյանը գործարքը կնքելիս չէր կարող ենթադրել խաբեության մասին:

Վերոգրյալի հիման վրա գտնում եմ, որ վճռաբեկ բողոքն անհիմն է, քանի որ ստորադաս դատարանների կողմից կայացվել է գործն ըստ էության լուծող օրինական և հիմնավոր դատական ակտ, հետևաբար անհրաժեշտ էր վճռաբեկ բողոքը մերժել և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.08.2023 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

ԴԱՏԱՎՈՐ՝ **ԷԴ. ՍԵԴՐԱԿՅԱՆ**